Արձանագրություն N 3

2023 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/29» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«26» «Հուլիսի» 2023թ. ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Խուրշուդյան
Հանձնաժողովի անդամներ	Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Խուրշուդյան)

Ընդունել ի գիտություն, որ 05.06.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի հունիսի 16-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի հունիսի 19-ին ժամը 11:00-ին: 2023 թվականի հունիսի 20-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«F. Hoffmann-La Roche» AG	sargsyan@am.am	144939
2	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	mercado@netsys.am	00471216
3	«Ռիխտեր Լամբրոն ՀՁ» ՍՊԸ	anush@lambronpharm.am	02542882
5	«Արֆարմացիա» ՍՊԸ	tender@arpharm.am	02505735

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Խուրշուդյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Խուրշուդյան)

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ «F. Hoffmann-La Roche» AG-ի և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարներում առկա պահանջվող հավելվածները կազմված են հրավերի պահանջներին անհամապատասխան՝ մասնավորապես երկու մասնակիցներն էլ առաջարկել են չգրանցված դեղեր, որոնք ներկայացնելու դեպքում մասնակիցները պետք է ներկայացնեն չգրանցված դեղերի մասով Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգով 10.07.2023թ. ծանուցել է նշված մասնակիցներին շտկել արձանագրված անհամապատասխանությունը և ներկայացնել հրավերով պահանջվող տեղեկանքը:

Որոշվեց. Գնահատումը հետաձգել մինչև ծանուցված մասնակիցների կողմից սահմանված պատշաճ կարգով անհրաժեշտ պահանջվող տեղեկանքները էլեկտրոնային աճուրդ համակարգում ներկայացնելը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Խուրշուդյան)

10.07.2023թ. մասնակիցների հայտերի գնահատումը կասեցվել էր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը թերի, ոչ ճիշտ ներկայացնելու և վերջիններս շտկելու նպատակով:

11.07.2023թ-ին ծանուցված մասնակիցներից «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն ներկայացրել է պահանջվող տեղեկանքները, իսկ «F. Hoffmann-La Roche» AG-ն ներկայացրել է գրություն, որ պահանջվող տեղեկանքը կներկայացվի ստանալուն պես:

Ուսումնասիրելով պահանջվող տեղեկանքները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց. Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել բավարար՝ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում նշված դեղերի մասով, բացի ֆիրմային անվանում՝ Hyrimoz, ապրանքային նշան՝ Hyrimoz, արտադրողի անվանումը՝ Sandoz GmbH դեղի: 3-րդ չափաբաժնի մասով գնահատել բավարար՝ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում նշված դեղերի մասով, բացի ֆիրմային անվանում՝ Humaglobin, ապրանքային նշան՝ Humaglobin, արտադրողի անվանումը՝ HUMAN BiopPlazma LLC և ֆիրմային անվանում՝ Intratect, ապրանքային նշան՝ Intratect, արտադրողի անվանումը՝ Biotest Pharma GmbH դեղերի:

Իսկ առաջին տեղ զբաղեցրած «F. Hoffmann-La Roche» AG-ի հայտը ներկայացված տեղեկանքը և մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Որոշվեց. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել՝ «Ռիխտեր-Լամբրոն ՀՁ» ՍՊԸ-ի և «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Խուրշուդյան)

19.06.2023թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Խուրշուդյան)

Հրավերի վերաբերյալ 09.06.2023թ. ստացվել է հարցում և դրա վերաբերյալ 09.06.2023թ. տրամադրվել է պարզաբանում՝ որը հրապարակվել է gnumner.am կայքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Խուրշուդյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/29» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր «F. Hoffmann-La Roche» AG-ի հետ 1-ին չափաբաժնի մասով՝ 83865.6 ԱՄՆ դոլլար պայմանագրային գումարով (հրավերով սահմանվել է 1ԱՄՆ դոլարը հավասար է 387.28 ՀՀ դրամին համարժեք), «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հետ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ 169,710,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Որոշվեց՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/29» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 4-րդ չափաբաժնի մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/29» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 27.07.2023թ.-ից մինչև 05.08.2023թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Խուրշուդյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

2023 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի վերաբերյալ վերջնական գներով, USD 387.28

NN	Դեղի անվանումը	Քանակ	«Էֆ Հոֆֆմանն լա Ռոշ» ԷլԹիԴի					«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ				
			Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Տոցիլիզումաբ 162 մգ, ենթամաշկային ներարկման լուծույթ	480	27,066,224.64	5,413,244.92	32,479,469.56	56,387.97	67,665.56			0	0.00	0.00
2	Ադալիմումաբ 40մգ, ենթամաշկային ներարկման լուծույթ	912			0.00	0.00	0.00	53,000,000	10,600,000	63,600,000	58,114.04	69,736.84
3	Իմունոգլոբուլին մարդու նորմալ լուծույթ կաթիլաներարկման	2,700			0	0.00	0.00	88,425,000	17,685,000.0	106,110,000.0	32,750.00	39,300.00
4	Ալանին, արգինին, ասպարագինաթթու, ցիստեին, գլուտամինաթթու, գլիցին, հիստիդին, իզոլեյցին, լեյցին, լիզին մոնոհիդրատ, մեթիոնին, օրնիթինի հիդրոքլորիդ, ֆենիլալանին, պրոլին, սերին, տաուրին, թրեոնին, տրիպտոֆան, թիրոզին, վալին, կալիումի ացետատ, կալցիումի քլորիդի դիհիդրատ, մագնեզիում ացետատի տետրահիդրատ, նատրիումի	181,500			0	0.00	0.00			0.0	0.00	0.00

2023 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի վերաբերյալ վերջնական գներով, USD 387.28

NN	Դեղի անվանումը	Քանակ	«Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ					«Արֆարմացիա» ՓԲԸ				
			Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Տոցիլիզումաբ 162 մգ, ենթամաշկային ներարկման լուծույթ	480										
2	Ադալիմումաբ 40մգ, ենթամաշկային ներարկման լուծույթ	912	55,990,000	11,198,000	67,188,000	61,392.54	73,671.05					
3	Իմունոգլոբուլին մարդու նորմալ լուծույթ կաթիլաներարկման	2,700						89,550,000	17,910,000.0	107,460,000.0	33,166.67	39,800.00
4	Ալանին, արգինին, ասպարագինաթթու, ցիստեին, գլուտամինաթթու, գլիցին, հիստիդին, իզոլեյցին, լեյցին, լիզին մոնոհիդրատ, մեթիոնին, օրնիթինի հիդրոքլորիդ, ֆենիլալանին, պրոլին, սերին, տաուրին, թրեոնին, տրիպտոֆան, թիրոզին, վալին, կալիումի ացետատ, կալցիումի քլորիդի դիհիդրատ, մագնեզիում ացետատի տետրահիդրատ, նատրիումի	181,500										

2023 թվականի կարիքների համար
ձեռք բերվելիք դեղերի վերաբերյալ
վերջնական գներով, USD 387.28

NN	Դեղի անվանումը	Քանակ	«Էֆ Հոֆֆմանն լա Ռոշ» ԷլԹիԴի 1 USD 387.28 դոլարով գնային առաջարկ									
			Նախնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Տոցիլիզումաբ 162 մգ, ենթամաշկային ներարկման լուծույթ	480	69,888.00	13,977.60	83,865.60	145.60	174.72	69,888.00	13,977.60	83,865.60	145.60	174.72